ՊՐԵՄԻՈՒՄ ԴԱՍԻ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ (ֆիզիկական անձանց համար)

Քարտատեսակ / Գործառնության տեսակ	Visa Platinum	World Mastercard Black Edition	Visa Signature
Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ Ռուբլի		
Քարտային հաշվի տարեկան սպասարկման վճար[1]	35,000 ՀՀ դրամ	70,000 ՀՀ դրամ	70,000 ՀՀ դրամ
Կից քարտերի հնարավորություն[2]	Visa Platinum, Visa Gold	World Mastercard Black Edition, Mastercard Gold	Visa Signature, Visa Platinum, Visa Gold
Կից քարտերի տարեկան սպասարկման վճար	• Visa Platinum՝ 17,500 ՀՀ դրամ • Visa Gold[3]՝ անվճար	• World Mastercard Black Edition ՝ 35,000 ՀՀ դրամ • Mastercard Gold[4]՝ անվճար	• Visa Signature՝ 35,000 ՀՀ դրամ • Visa Platinum՝ 17,500 ՀՀ դրամ • Visa Gold[4]՝ անվճար
Կանխիկի տրամադրում Ինեկոբանկի կանխիկացման կետերում	• Մինչև վարկային գիծ ակտիվացնելը՝ 0% • Վարկային գիծ ակտիվացնելուց հետո՝ 1%	0%	• Մինչև վարկային գիծ ակտիվացնելը՝ 0.25% • Վարկային գիծ ակտիվացնելուց հետո՝ 1%

[1] Այն հաճախորդները, ովքեր ունեն սույն սակագներով World Mastercard Black Edition/Visa Signature քարտատեսակներից որևէ մեկը, սույն սակագներով սահմանված՝ երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ քարտի դեպքում քարտային հաշվի տարեկան սպասարկման վճարը սահմանվում է համաձայն *Կից քարտերի տարեկան սպասարկման վճար* սակագնի:

[2] Կից քարտերի համար գործում են նույն սակագները, ինչ հիմնական քարտերի համար՝ բացառությամբ քարտային հաշվի տարեկան սպասարկման վճարի: Հիմնական քարտապանի կողմից կարող է սահմանվել կից քարտից գործարքների կատարման ամսական առավելագույն սահմանաչափ:

[3] Հաճախորդին կարող է տրամադրվել մեկ անվճար Gold դասի կից քարտ, իսկ երկրորդ և հետագա կից քարտերի դեպքում քարտի տարեկան սպասարկման սակագինը սահմանվում է «Վճարային քարտերի և վարկային գծերի տրամադրման պայմաններ և սակագներ» փաստաթղթով *կից քարտերի տարեկան սպասարկման վճար* սակագնի համաձայն:

[4] Հաճախորդին կարող է տրամադրվել առավելագույնը երկու անվճար Gold դասի կից քարտ իսկ երրորդ և հետագա կից քարտերի դեպքում քարտի տարեկան սպասարկման սակագինը սահմանվում է «Վճարային քարտերի և վարկային գծերի տրամադրման պայմաններ և սակագներ» փաստաթղթով *կից քարտերի տարեկան սպասարկման վճար* սակագնի համաձայն:

Առանց քարտի կիրառման կանխիկի տրամադրում Ինեկոբանկի դրամարկղերում	Մինչև վարկային գիծ ակտիվացնելը՝ • ՀՀ դրամ- 0.2%, բայց ոչ պակաս քան 500 ՀՀ դրամ • ՌԴ ռուբլի- 0.5%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ • -ԱՄՆ դոլար՝1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ • Եվրո- 1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ Վարկային գիծ ակտիվացնելուց հետո՝ սույն սակագներով սահմանված՝ Ինեկոբանկի կանխիկացման կետերում կանխիկի տրամադրման համար սահմանված սակագնից և սույն սակագներով սահմանված մինչև վարկային գիծ ակտիվացնելը առանց քարտի կիրառման կանխիկի տրամադրում Ինեկոբանկի դրամարկղերում սակագնից առավելագույնը:	• ՀՀ դրամ- 0.2%, բայց ոչ պակաս քան 500 ՀՀ դրամ • ՌԴ ռուբլի- 0.5%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ • ԱՄՆ դոլար՝1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ • Եվրո- 1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ	**Դրամային քարտերի դեպքում՝** · Սույն սակագներով սահմանված՝ Ինեկոբանկի կանխիկացման կետերում կանխիկի տրամադրման համար սահմանված սակագին, **Արտարժութային այն քարտերի դեպքում, որոնց վրա առկա չէ վարկային գիծ՝** · ՌԴ ռուբլի- 0.5%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ · ԱՄՆ դոլար-1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ · Եվրո- 1%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ **Արտարժութային այն քարտերի դեպքում, որոնց վրա առկա է վարկային գիծ՝** սույն սակագներով սահմանված՝ Ինեկոբանկի կանխիկացման կետերում կանխիկի տրամադրման համար սահմանված սակագնից և սույն սակագներով սահմանված մինչև վարկային գիծ ակտիվացնելը առանց քարտի կիրառման կանխիկի տրամադրում Ինեկոբանկի դրամարկղերում սակագնից առավելագույն:
Կանխիկի տրամադրում ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կանխիկացման կետերում	• Մինչև վարկային գիծ ակտիվացնելը՝ 1% • Վարկային գիծ ակտիվացնելուց հետո՝ 2%	1%	• Մինչև վարկային գիծ ակտիվացնելը՝ 1% • Վարկային գիծ ակտիվացնելուց հետո՝ 2%

Կանխիկի տրամադրում ArCa համակարգի միջոցով հավաստագրում չտրամադրող բանկերի կանխիկացման կետերում և ՀՀ տարածքից դուրս	2%, սակայն ոչ պակաս քան 1,500 ՀՀ դրամ	1.5%, սակայն ոչ պակաս քան 1,500 ՀՀ դրամ	2%, սակայն ոչ պակաս քան 1,500 ՀՀ դրամ
Քարտից քարտ փոխանցման վճար[5]	• Մինչև վարկային գիծ ակտիվացնելը՝ 0% • Վարկային գիծ ակտիվացնելուց հետո՝ 1%	0%	• Մինչև վարկային գիծ ակտիվացնելը՝ 0.25% • Վարկային գիծ ակտիվացնելուց հետո՝ 1%
Քարտային հաշվից նույն հաճախորդի Ինեկոբանկի այլ բանկային հաշիվներին փոխանցում[5] **(միայն ԻնեկոՕնլայն/ԻնեկոՄոբայլ համակարգերով)**			
Ինեկոբանկի ՖԳԻԱՍ-ների միջոցով փոխանցում Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտերին[6]	0%		
Ինեկոբանկի ՖԳԻԱՍ-ների միջոցով փոխանցում ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված վճարային քարտերին[6]	0.5%		
Կատարված գործարքի վերաբերյալ SMS/Viber/WhatsApp հաղորդագրության ուղարկում[7]	անվճար		
Քարտի առաքման դեպքում քարտի տրամադրման վճար	**անվճար**		
Քարտի շտապ պատվիրման սակագին	3,000 ՀՀ դրամ	անվճար	
Կորցրած կամ վնասված քարտի վերաթողարկում	5,000 ՀՀ դրամ	անվճար	

[5] ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգերի «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող փոխանցումների համար կիրառվում են «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարված գործարքների համար սահմանված սակագները, Ինեկոբանկի պաշտոնական կայքի «Առցանց վճարումներ» համակարգով կատարված գործարքների համար կիրառվում են «Առցանց վճարումներ» համակարգի միջոցով կատարվող գործարքների համար սահմանված սակագները:

[6] Ինեկոբանկի ՖԳԻԱՍ-ների միջոցով քարտից քարտ փոխանցում իրականացնելու դեպքում լրացուցիչ կիրառվում է նաև սույն փաստաթղթով սահմանված *Քարտից քարտ փոխանցման վճար* սակագինը:

[7] Եթե Հաճախորդի հեռախոսահամարը տրամադրված չէ ՀՀ-ում գործող օպերատորների կողմից (օտարերկրյա հեռախոսահամար է), ապա Բանկը կարող է քարտային որոշ գործարքների վերաբերյալ հաղորդագրությունները առաջնահերթ ուղարկել Հաճախորդի հեռախոսահամարին «Viber» կամ «WhatsApp» հավելվածների միջոցով, իսկ այդ հավելվածների միջոցով ծանուցման անհնարինության դեպքում՝ SMS հաղորդագրությամբ: Սույն փոփոխությունը ուժի մեջ է մտնում 20/11/2023 թ.-ից:

Կորցրած կամ վնասված քարտի հրատապ վերաթողարկում ՀՀ տարածքից դուրս	Համաձայն Visa միջազգային վճարային համակարգի կողմից "Global Customer Assistance Service (GCAS)" ծառայության սակագների	100,000 ՀՀ դրամ[8]	Համաձայն Visa միջազգային վճարային համակարգի կողմից "Global Customer Assistance Service (GCAS)" ծառայության սակագների
Կանխիկ գումարի շտապ տրամադրում արտասահմանում (մինչև 1,000 ԱՄՆ դոլար)	Համաձայն Visa միջազգային վճարային համակարգի կողմից "Global Customer Assistance Service (GCAS)" ծառայության սակագների	70,000 ՀՀ դրամ[8]	Համաձայն Visa միջազգային վճարային համակարգի կողմից "Global Customer Assistance Service (GCAS)" ծառայության սակագների
Օդանավակայանների Lounge Key բիզնես սպասասրահներ[9] անվճար մուտք[10]	• տարեկան 2 անգամ	• տարեկան 10 անգամ	• տարեկան 4 անգամ
Գնումների ապահովագրություն	անվճար	-	անվճար
Ճանապարհորդական անհարմարավետություններից ապահովագրություն՝ թռիչքի և ուղեբեռի ուշացում	անվճար	անվճար[11]	անվճար
Արտերկիր մեկնողների աջակցության ապահովագրություն	-	անվճար	անվճար
Միջազգային կոնսիերժ ծառայություն	անվճար	-	անվճար
Անվճար Fast Track ծառայություն	տարեկան 2 անգամ	տարեկան 10 անգամ	տարեկան 10 անգամ

Ընդհանուր դրույթներ Վճարային քարտերի համար

1. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերը տրամադրվում են 5 տարի ժամկետով:

2. Քարտային հաշվի նվազագույն մնացորդ չի սահմանվում:
3. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը 0% է:

[8] Ծառայությունը տրամադրվում է անմիջապես Mastercard միջազգային վճարային համակարգի կողմից "Mastercard Global Service" ծառայության շրջանակում:
[9] Սպասասրահներ, որոնք ներառված են Mastercard Travel Experiences (World Mastercard Black Edition քարտի դեպքում) կամ Lounge Key (Visa Platinum և Visa Signature քարտի դեպքում) ծառայության շրջանակում առաջարկվող սպասասրահների ցանկում:
[10] Օդանավակայանների բարձրակարգ սպասարկման սրահներ յուրաքանչյուր լրացուցիչ այցելուի 1 այցի կամ տարեկան անվճար մուտքերի սպառումից հետո քարտապանի յուրաքանչյուր լրացուցիչ 1 այցիհամար կգանձվի սակագին՝ 32 ԱՄՆ դոլար/համարժեք ՀՀ դրամի չափով գումար Visa Platinum/Visa Signature քարտի դեպքում և 16,000 ՀՀ դրամ՝ World Mastercard Black Edition քարտի դեպքում: Հաճախորդի՝ տվյալ օրացուցային տարում չօգտագործված անվճար մուտքերի հնարավորությունը չի փոխանցվում հաջորդ տարի:
[11] Ներառված է Արտերկիր մեկնողների աջակցության ապահովագրության փաթեթում:

4. Քարտով անկանխիկ գործարքների իրականացումն անվճար է: Մեկ անկանխիկ գործարքի համար առավելագույն սահմանաչափ, ինչպես նաև անկանխիկ գործարքների օրական առավելագույն սահմանաչափ և քանակ չի սահմանվում:

5. Կանխիկացման կետերում կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը 10 գործարք է:

6. Կանխիկացման կետերում կանխիկացման գործարքների օրական առավելագույն սահմանաչափն է՝

ՀՀ դրամ	2,000,000
ԱՄՆ դոլար, Եվրո	5,000
ՌԴ ռուբլի	250,000

7. Հաճախորդի դիմումի համաձայն պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար կանխիկացման սահմանաչափի բարձրացման դեպքում[12] սակագինը սահմանվում է

- 10,000 ՀՀ դրամ՝ Visa Platinum քարտատեսակի դեպքում,
- անվճար՝ World MasterCard Black Edition/Visa Signature քարտատեսակի դեպքում:

8. Քարտը տրամադրվում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մարզերում գտնվող Բանկի մասնաճյուղերի համար նշված ժամկետին գումարվում է նաև քարտի տեղափոխման ժամանակը: Շտապ պատվիրման դեպքում քարտը տրամադրվում է 1 բանկային օրվա ընթացքում Բանկի Մանրածախ կամ Ունիվերսալ մասնաճյուղում, իսկ մարզերում գտնվող Բանկի մասնաճյուղերի համար նշված ժամկետին գումարվում է նաև քարտի տեղափոխման ժամանակը:

9. Քարտերի առաքման հնարավորությունը հասանելի է Երևան քաղաքում և ՀՀ մարզերում: Քարտերի առաքման հնարավորությունը գործում է Բանկի մասնաճյուղերում և ԻնեկոՕնլայն համակարգի/ԻնեկոՄոբայլ հավելվածի միջոցով նոր քարտ պատվիրելու դեպքում, ինչպես նաև Բանկի մասնաճյուղերում և ԻնեկոՕնլայն համակարգի/ԻնեկոՄոբայլ հավելվածի միջոցով հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականի հիման վրա քարտի վերաթողարկման դեպքում: Քարտը հաճախորդին առաքվում է Բանկում քարտի առաքման փաթեթը պատրաստ լինելուց հետո 1-3 աշխատանքային օրերի ընթացքում Երևանի տարածքում և 1-5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ մարզերում առաքումների դեպքում և հաճախորդին հանձնվում է անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

10. Քարտի բլոկավորումը և ապաբլոկավորումը անվճար է:

11. Նոր պին կոդի տրամադրման համար միջնորդավճար չի գանձվում:

Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայությունը ակտիվանում է քարտի պատվիրման պահին հաճախորդի համապատասխան հանձնարարականի հիման վրա: Հաճախորդը կարող է նաև ընտրել գումարի չափը, որը գերազանցող գործարքների վերաբերյալ ցանկանում է ստանալ SMS հաղորդագրություն: Վճարային քարտով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայության ակտիվացում/ապաակտիվացում, ինչպես նաև վերոնշյալ գործարքի գումարի չափի փոփոխություն կարող է իրականացվել քարտի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում հաճախորդի կողմից Բանկի տարածքում/ԻնեկոՕնլայն համակարգում ներկայացված համապատասխան դիմում-հայտի հիման վրա:

12. Քարտային հաշվի վաղաժամկետ փակումն անվճար է:

[12] Կանխիկացման սահմանաչափի բարձրացումը իրականացվում է Բանկի համաձայնությամբ:

13. Քաղվածքի ձևակերպման ամսաթիվ (Statement date) է համարվում յուրաքանչյուր ամսվա 1-ը: Ամսական քաղվածքի տրամադրումը անվճար է: Յուրաքանչյուր լրացուցիչ քաղվածքի տրամադրման դեպքում սակագին չի գանձվում:

14. Քարտային հաշվի առաջին տարվա սպասարկման վճարը վճարվում է անմիջապես քարտային հաշիվը բացելիս, իսկ յուրաքանչյուր հաջորդ տարվա համար վճարվում է մինչև Քարտի թողարկման ամսվա 25-ը, եթե այլ բան նախատեսված չէ սակագներով:

15. Բանկի ՖԳԻԱՍ-ների միջոցով վճարային քարտերով իրականացվող գործարքների համար կիրառվում է սույն փաստաթղթով սահմանված՝ Ինեկոբանկի կանխիկացման կետերից կանխիկի տրամադրման սակագինը՝ բացառությամբ կոմունալ վճարումների իրականացման գործարքների, որոնց համար միջնորդավճար չի սահմանվում:

16. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:

Առանց գրավային ապահովության վարկային գծերի տրամադրման պայմաններ և սակագներ

Գործառնության տեսակը		**Visa Platinum**	**Mastercard World Black Edition/Visa Signature**
Վարկային գծի սահմանաչափ[13]	ՀՀ դրամ	300,000-10,000,000	300,000-10,000,000
Տարեկան անվանական տոկոսադրույք 1-ին խմբի[14] **գործարքների համար**	ՀՀ դրամ	19-20%	17-19%
Տարեկան անվանական տոկոսադրույք 2-րդ խմբի[15] **գործարքների համար**	ՀՀ դրամ	19-20%	17-19%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	ՀՀ դրամ	21.12-22.32%	18.74-21.12%
Անտոկոս ժամանակահատված	1-ին խմբի գործարքներ[14]	չի կիրառվում	
	2-րդ խմբի գործարքներ[14]	մինչև 52 օր՝ կախված վարկն օգտագործելու ամսաթվից	
Վարկային գծի ամսական նվազագույն հետվճարի չափ		Օգտագործված վարկի գումարի 10%	
Վճարման ժամկետ՝ սկսած Քաղվածքի օրվանից (ներառյալ)		21 օր	

[13] Վարկային գծի տարեկան անվանական տոկոսադրույքը և առավելագույն գումարը որոշվում են համաձայն հաճախորդի վարկարժանության գնահատականի:

[14] 1-ին խմբի գործարքներ

- գործարքներ, որոնք կատարվել են այն կետերում, որոնք գրանցված են որպես
  - ✓ կանխիկացման կետ
  - ✓ պետական վճարումների իրականացման կետ
  - ✓ քարտից քարտ փոխանցման կետ
  - ✓ քարտով կոմունալ վճարումների իրականացման կետ
- քարտից «Պարբերական վճարումների» միջոցով կատարվող գործարքները
- 2-րդ խմբում չներառված բոլոր գործարքները, եթե այլ բան չի նախատեսված Բանկում գործող ծառայությունների պայմաններով:

2-րդ խմբի գործարքներ

- որպես առևտրի և սպասարկման կետ գրանցված կետերում կատարված անկանխիկ գործարքներ:

Վարկային միջոցների հաշվին վարկի մարման վճար՝ մարվող գումարից	1%	0.5%

Ընդհանուր դրույթներ Վարկային գծի տրամադրման համար

1. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: Եթե հաճախորդը համաձայն չէ տոկոսադրույքի փոփոխության հետ, ապա իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով տրամադրված վարկի հիմնական գումարն ամբողջությամբ և վճարելով հաշվարկված տոկոսները և այլ վճարները: Անկախ Բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկի (փոխառության) տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

2. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԻՆԵԿՈԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ (www.inecobank.am) «ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ԷՋՈՒՄ:

3. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԻՍԿ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼԻՍ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:

4. Վարկային գիծը տրամադրվում է քարտի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար:

5. Քարտով տրամադրվող վարկային գծերի դեպքում Բանկի որոշմամբ կարող է պահանջվել գրավ:

6. Վարկային գիծը տրամադրվում է անկանխիկ՝ մայր գումարի և տոկոսագումարների ամսական մարման պայմանով: Տոկոսադրույքը կիրառվում է վարկային գծի նվազող մնացորդի վրա՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:

7. Վարկային գծի չօգտագործված միջոցների դիմաց տոկոս չի կիրառվում:

8. Արտոնյալ ժամանակահատվածով վարկային գծի տրամադրման դեպքում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում օգտագործված Վարկային գծի գումարը կամ դրա մի մասը մինչև Վճարման ժամկետի ավարտի օրը (ներառյալ) վերադարձնելու դեպքում, այդ գումարի նկատմամբ Գրանցման օրվանից մինչև փաստացի վճարման օրը (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար տոկոսներ չեն հաշվարկվում:

9. Ժամկետանց պարտավորությունների մարում՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ չմարված գումարի 0.13% -ի չափով, որը կարող է փոփոխվել ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխման դեպքում:

10. Վարկային գիծը ցանկացած ժամանակ կարող է վաղաժամկետ մարվել, որի դեպքում տույժեր և այլ վճարներ չեն գանձվում:

11. Առանց գրավային ապահովության վարկային գծի տրամադրման համար անհրաժեշտ է ներկայացնել

- ածը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)
- եկամուտները հիմնավորող փաստաթուղթ, այդ թվում աշխատավայրից տեղեկանք (ըստ պահանջի)
- այլ փաստաթղթեր (ըստ պահանջի):

12. Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ՝

- կայուն եկամտի աղբյուր,
- դրական կամ չեզոք վարկային պատմություն,
- արժանահավատ և լիարժեք փաստաթղթեր:

13. Վարկի տրամադրման վերաբերյալ բացասական որոշման կայացման չափանիշներ՝

- վարկը մարելու համար անբավարար եկամուտներ,
- հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում,
- բացասական վարկային պատմություն,
- հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտ:

14. Վարկի տրամադրման որոշման կայացում և հաճախորդին տեղեկացում՝ պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 1 աշխատանքային օր:

15. Վարկի տրամադրման ժամկետ՝ վարկի տրամադրման դրական որոշման կայացումից հետո 3 բանկային օրվա ընթացքում:

16. Վարկային գծերը ձեվակերպվում են բանկի մասնաճյուղերում, կենտրոնական գրասենյակում և sprintonline.am հարթակի միջոցով: Բանկի մասնաճյուղերի հասցեներին կարող եք ծանոթանալ Ինեկոբանկ ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ www.inecobank.am:

17. sprintonline.am հարթակի միջոցով վարկային գծերը տրամադրվում են բացառապես հարթակից պատվիրվող նոր քարտերի դեպքում

Ներքին օգտագործման ուղեցույց

1. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերը հաշվարկային են՝ նախատեսված ինչպես սեփական, այնպես էլ վարկային միջոցների տնօրինման համար:

2. Սույն սակագների շրջանակներում հաճախորդի վարկարժանության գնահատականից կախված տարեկան անվանական տոկոսադրույքների սանդղակը հաստատվում է Բանկի Գործադիր տնօրենի կողմից, Զարգացման և մարքեթինգի տնօրենի/Մարքեթինգի ծառայության ղեկավարիառաջարկով, Ֆինանսական, Մանրածախ բիզնեսի և Ռիսկերի տնօրենների դրական դիրքորոշմամբ:

3. Առանց գրավային ապահովության մինչև 5 մլն ՀՀ դրամ գումարով վարկային գծերը տրամադրվում են համաձայն «Ֆիզիկական անձանց առանց կամ մասնակի գրավով ապահովված վարկերի տրամադրման գործընթացում վարկային սահմանաչափերի որոշման կարգ» (01-ORD-52)

փաստաթղթի և «Ֆիզիկական անձանց սպառողական և հիփոթեքային վարկերի տրամադրման նպատակով եկամուտների հաշվարկման կարգ»(01-ORD-51) փաստաթղթերի համաձայն:

4. Սույն փաստաթղթի շրջանակում տրամադրված գործող վճարային քարտերին վարկային գիծ ակտիվացնելիս քարտի պրոֆայլում կատարվում է կանխիկացման սակագնի համապատասխան փոփոխություն (անհրաժեշտության դեպքում), ինչպես նաև վարկային գծի տարեկան անվանական տոկոսադրույքի փոփոխություն՝ համաձայն սքորինգային համակարգի կողմից կատարված առաջարկի: Քարտի պրոֆայլի փոփոխությունը իրականացվում է Գործառնական բաժնի համապատասխան աշխատակցի կողմից՝ ֆինանսական խորհրդատուի կողմից ներկայացված դիմում-նամակի հիման վրա: Կից քարտի առկայության դեպքում կից քարտի պրոֆայլը պետք է համապատասխանի հիմնական քարտի պրոֆայլին:

5. Վճարային քարտին առկա վարկային գիծը փակելու դեպքում քարտի պրոֆայլը Գործառնական բաժնի համապատասխան աշխատակցի կողմից համապատասխանեցվում է սույն փաստաթղթով սահմանված սակագներին:

6. Սույն սակագներով սպասարկվող քարտերի գործողության ժամկետը լրանալիս վարկային գծի առկայության դեպքում քարտերի վերաթողարկումն իրականացվում է գործող վարկային սահմանաչափով[15], սակայն համաձայն վերաթողարկման պահին գործող սակագների, եթե սքորինգային համակարգի կողմից Հաճախորդին կատարվել է առաջարկ:

7. Եթե սքորինգային համակարգի կողմից Հաճախորդին առաջարկ չի կատարվում, ապա քարտի վերաթողարկում իրականացվում է համաձայն Բանկում տվյալ պահին գործող ընթացակարգի:

<u>World Mastercard Black Edition/Visa Siganture քարտեր</u>

1. Պրեմիում հաճախորդներին առաջին World Mastercard Black Edition կամ Visa Signature վճարային քարտը տրամադրվում է անվճար (առանց քարտային հաշվի սպասարկման վճարի քարտի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում):

2. Հաճախորդի սեգմենտը պրեմիումից անհատ փոխվելու դեպքում, հաճախորդը սկսում է սպասարկվել սույն սակագնի շրջանակներում ոչ պրեմիում հաճախորդների համար սահմանված ստանդարտ պայմաններով:

3. Պրեմիում հաճախորդների համար վարկային գծերը տրամադրվում են նշված նվազագույն տոկոսադրույքով՝ անկախ հաճախորդի վարկային ռիսկի գնահատականից:

4. Պրեմիում հաճախորդները 04/11/2021թ.-ի Վարկային կոմիտեի առաջարկով համարվում են «կարևոր հաճախորդ»՝ համաձայն «Ինեկոբանկ ՓԲԸ առանց գրավային ապահովման կամ մասնակի ապահովված վարկերի տրամադրման կարգ» փաստաթղթի /01-ORD-26/ 6.3.2.2 ենթակետի:

5. Այն դեպքում, եթե հաճախորդը համարվում է «կարևոր հաճախորդ», ապա վերջինիս սույն սակագների շրջանակներում տրամադրվող վարկային գծերի հաստատումը իրականացվում է՝ համաձայն «Ինեկոբանկ ՓԲԸ վարկավորման գործընթացին մասնակցող աշխատակիցների լիազորությունները եվ դրանց հաստատման կարգը» փաստաթղթի /01-ORD-01/:

---

[15] Սքորինգային համակարգի կողմից գործող սահմանաչափից ցածր սահմանաչափ առաջարկելու դեպքում սահմանաչափը չի նվազեցվում: Սքորինգային համակարգի կողմից գործող սահմանաչափը գերազանցող սահմանաչափ առաջարկելու դեպքում սահմանաչափը կարող է վերանայվել միայն հաճախորդի դիմումի համաձայն: